Մխչյանի Ք.Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոց

Դպրոցի տնօրեն _____ Ք. Մաթևոսյան

01.09.22թ

ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2022-2023 ուստարի

Մ/Մ նախագահ՝ Կ .Պողոսյան

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ 2022–2023թթ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմաաշխարհագրական մեթոդական միավորումը ընդգրկում է հետևյալ առարկաներն՝ պատմություն, աշխարհագրություն, հայոց եկեղեցու պատմություն, հասարակագիտություն, հայրենագիտություն: Մեթոդական միավորման կազմի մեջ մտնող մանկավարժները հմուտ են իրենց գործի տերը: Նրանք ստեղծագործող են, աշխատում են սիրով, տիրապետում են մանկավարժական վարպետությանը և ունեն մանկավարժական փորձ: Դասերը հաճախ են կազմակերպում և անցկացնում համակարգչային սենյակում, որոնց ժամանակ օգտագործում են էլեկտրոնային գրատախտակը լուսացրիչն և այլ տեխնիկաներ, համեմելով դասերը նաև ինտերակտիվ մեթոդներով, չշեղվելով չափորոշիչային պահանջներից: Կատարում են փոխադարձ դասալսումներ, կատարում փորձի փոխանակում: Դասապրոցեսները հագեցած են, ընթացքն՝ աշակերտակենտրոն, օգտագործում են համապատասխան քարտեզներ և դիտակտիկ նյութեր: Ուսուցիչները կարդում են մանկավարժական զեկույցներ մ/մ նիստերի ժամանակ տարբեր թեմաներով: Մեթոդական միավորման աշխատանքները դպրոցի տնօրինության կողմից գնահատվել են լավ: Ուսումնասիրվել է մ/մ պատկանող բոլոր առարկաների դրվածքները: Մ/մ պատկանող բոլոր ուսուցիչները դրվածքների ուսումնասիրման ժամանակ, կազմակերպել են բաց դասեր, միջոցառումներ, ուխտագնացություններ, տարբեր խորագրերով:

2022–2023թթ մ/մ-ը առաջին կիսամյակում ՀԵՊ ուսուցիչ Մանուշակ Մխիթարյանը ներկայացվել է հերթական պարտադիր ատեստավորման, ներկայացվել է առաջին կարգի տարակարգի, որը հաստատվել է ԿԳՄՍ նախարարության կողմից: Մշակվել են նաև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնական պլանները: Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասերի կազմակերպումը և դասի յուրացումը աշակերտների կողմից, իրենց հնարավորության չափով, ապահովել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակ: Հատուկ ուշադրություն դարձնել *ուսուցիչ-աշակերտ Փոխհարաբերություններին: Սովորողների ընթացիկ գնահատումն իրականացվել է բանավոր հարցման, թեմատիկ աշխատանքի, գործնական աշխատանքի և կիսամյակային աշխատանքների* հիման վրա, իսկ երկրորդ կիսամյակում կիսամյակային գրավոր աշխատանքը հանվել է:Մ/մ միավորումը դասընթացը կրկնող աշակերտներ չունի:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ «2022–2023» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ ԾՐԱԳԻՐՆ

թիվ	Ամիսը	Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը	Կատարող պաշտոնյան ազգանուն անուն	Նշումներ կատարման մասին
1	սեպտեմբեր	ՀՀ անկախությանը նվիրված ռադիոհաղորդում <<Ազատություն, Անկախություն, Պետականություն>> «44 օրյա պատերազմը և հայ ժողովուրդը»–զեկույց (Սեպտեմբերի 18)	Մանուշակ Մխիթարյան, Մարուշ Մաթևոսյան	
2	Հոկտեմբեր	Համաշխարային պատմություն առարկայի դրվածքի ուսումնասիրումը մ/մ շրջանակներում տնօրինության կողմից: Հայրենագիտություն առարկայի դրվածքի ուսումնասիրությունը մ/մ շրջանակներում: Հերթական պարտադիր ատեստավորում անցած ուսուցչի դիտարկում Զեկույց<<հետազոտական աշխատանքի ներկայացում>> Օրինակելի դասերի, միջոցառումների կազմակերպում, Փոխադարձ դասալսումներ Աստվածաշնչյան ընկերության կողմից կազմակերպվող վիկտորինայի մասնակցություն (Հոկտեմբերի 5)	ՄՄ նախագահ՝ Կարինե Պողոսյան, Մանուշակ Մխիթարյան, Ռուզաննա Պետրոսյան	
3	Նոյեմբեր	Աշխարհագրություն առարկայի դրվածքի ուսումնասիրությունը մ/մ շրջանակներում, միջին դպրոցում: Զեկույց–<<Սևանա լճի հիմնախնդիրները>> Օրինակելի դասի կազմակերպում ՀԵՊ և պատմություն, առարկաների ներդպրոցական Փուլի թեստերի կազմում և անցկացում:	ՄՄ նախագահ՝ Կարինե Պողոսյան, Մանուշակ Մխիթարյան	

4	Դեկտեմբեր	Աշխարհագրություն առարկայի դրվածքի ուսումնասիրությունը մ/մ շրջանակներում ավագ դպրոցում: Փոխադարձ դասալսումներ Աշակերտների գիտելիքների ստուգում: Առաջին կիսամյակի ամփոփում: Ներդպրոցական օլիմպիադաների արդյունքների ամփոփում:	Տնօրեն՝ Ք. Մաթևոսյան, ՄՄ նախագահ՝ Կարինե Պողոսյան,	
5	Հունվար	Փոխադարձ դասալսումներ Ռադիոհաղորդում, նվիրված Հայոց բանակի կազմավորմանը :		
6	Փետրվար	Հայոց պատմություն առարկայի դրվածքի ուսումնասիրումը մ/մ շրջանակներում միջին դպրոցում: Զեկույց, Փոխադարձ դասալսումներ: Ազգային-եկեղեցական տոների Սուրբ Սարգիս և Տյառնընդառաջ տոների նշումը:	Մանուշակ Մխիթարյան, Ռուզաննա Պետրոսյան	
7	Մարտ	Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրությունը ավագ դպրոցում: Փոխադարձ դասալսումներ: Բանավեճ: Զեկույց- Օրինակելի դասեր: Միջոցառումներ:	Մանուշակ Մխիթարյան, Ռուզաննա Պետրոսյան, Աննա Հակոբյան	
8	Ապրիլ	ՀԵՊ առարկայի դրվածքի ուսումնասիորությունը միջին և ավագ դպրոցում: Փոխադարձ դասալսում: Զեկույց– <<Քրիստոնեական բարոյագիտություն>> <<Զատիկ>> Ցուցահանդեսի բացում համադպրոցական: Միջոցառում<<Զատիկ>> Հիշատակության օր: Հայոց Մեծ Եղեռնի 108-րդ տարելից: Մոմավառություն Մխչյանի եկեղեցում:	Մանուշակ Մխիթարյան	

9	Մայիս	Փոխադարձ դասալսումներ Թեմատիկ պլանների կատարողականի ստուգում: Ծաղկադրում հուշարձան համալիր Հաղթանակի օրվա կապակցությամբ էլեկտրոնային մատենավարության ստուգում:	մ/մ անդամներ մ/մ նախագահ Կարինե Պողոսյան	
10	Հունիս	Քննությունների արդյունքների ամփոփում: Ուսումնական տարվա որոշումների կատարման մասին մ/մ նախագահի զեկուցում: Ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերլուծություն և ամփոփում:	մ/մ անդամներ մ/մ նախագահ Կարինե Պողոսյան	